

ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԿԱՐՍ ՔԱՂԱՔԸ ՀԱՅ ՈՒՒՏԱՎՈՐԻ ԱԶՔԵՐՈՎ

ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բանալի բառեր – Ղարս, Վանանդ, Ս. Առաքելոց եկեղեցի, Կարուց բերդ, Կարդանի կամուրջ, Հին թաղ, ռուսական շրջան, Եղիշե Չարենց, Շուրա, Աթաթուրք, Կարսի պայմանագիր:

Ներկայիս Թուրքիայի Հանրապետության Կարսի նահանգը (իլ) բաժանվում է ութ գավառների (Կարս, Արփաչայ, Աքյաքա, Սուսուզ, Սելիմ, Սարըքամըշ, Կաղզման և Դիգոր), ընդհանուր մոտ 300 000 բնակչությամբ: Նահանգում կա 9 քաղաք և մոտ 380 գյուղ: Այն մի կողմից սահմանակից է Արդահանի, Էրզրումի, Արարատի (Ադրի) և Իգդիրի նահանգներին, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին¹: Կենտրոնը համարվում է Կարս քաղաքը, որը նաև տարածաշրջանի խոշորագույն քաղաքներից է, ունի 100 000-ից ավելի բնակիչ: Այն տարածվում է համանուն սարահարթում, շրջապատված է հացահատիկի հսկայական դաշտերով, ուր մերթընդմերթ աչք են զարնում հայկական հին շինությունների և հոգևոր կառույցների ավերակները:

Կարսը համարվում է տրանսպորտային խոշոր հանգույց: Այստեղ են հատվում Գյումրի-Կարս (չգործող) և Բաքու-Թբիլիսի-Կարս, Կարս-Էրզրում երկաթգծերը: Վերջին շրջանում Կենտրոնական Անատոլիայից գործարկվել է նաև «Արևելյան ճեպընթացը», որը լրացուցիչ խթան է հանդիսացել տեղի զբոսաշրջության ոլորտի զարգացման ուղղությամբ: Կարսը հարակից խոշոր քաղաքների հետ կապված է նաև օդային կապով:

Այստեղից են դուրս գալիս հիմնական ավտոճանապարհները: Գլխավորներից մեկը ձգվում է դեպի Օլթի-Արդահան մայրուղի, որի մոտ գտնվում են պատմական Բանակի տաճարի ավերակները (Bana Cathedral): Մյուսը՝ հարավ-արևմուտք, որը զուգակցելով երկաթգծին տանում է դեպի ձմեռային սպորտաձևերի խոշոր հանգստավայր հանդիսացող Սարիղամիշ (Սարըքամըշ) քաղաքը:

Հեռվից նշմարվում են ներկայիս Կարսի անբաժանելի մասը հանդիսացող տասնյակ մինարեթների փայլուն գագաթները: Քաղաքն անվանում են նաև Ղարս, իսկ ավանդությունը հուշում է, որ ժամանակին՝ հայոց արքաներից մեկի հարսը շատ էր սիրում զբոսնել այս վայրում, ինչն էլ

¹ <http://www.kars.gov.tr>

հանդիսացել էր այդ տարածքը կոչելու Հարս (Կարս): Այն յուրօրինակ հատակագծով, նեղ ու երկար փողոցներով քաղաք է, բաղկացած՝ հին և նոր թաղամասերից: Հին թաղն ընկած էր ամրոցի շուրջը: Ժամանակին այստեղ հայեր են ապրել՝ հիմնականում փոքր մեկ կամ երկհարկանի տներում: Այստեղ կառուցվել էր գործարար կենտրոն՝ սև սրբատաշ քարով պատված խանութներ, արհեստանոցներ և ոչ մեծ թվով բնակելի տներ: Սարալանջի թեքությամբ գրեթե իրար վրա դասավորված կիսանկուղային խրճիթների մեծ մասը, մնալով անխնամ, խարխլվել են ու բնակության համար միանգամայն անպետք դարձել: Այդպիսին է նաև եղել երկաթե կամրջի մերձակայքում գտնվող Եղիշե Չարենցի հայրական տունը:

Այդ կառույցը, որը կարող էր կիրառվել որպես թանգարան, այժմ լիովին ավերվել է: Ժամանակին այս տունն ուներ իր ավանդազրույցը, որը կապված էր մեծանուն գրողի մանկության հետ: Ասում են, թե նա ամեն օր դպրոց գնալիս տանից տարատեսակ իրեր, հագուստ և սննունդ էր վերցնում ու գնում տան առջևի երկաթե կամրջի կողմը, որի մոտ մի անօթևան մարդ էր ապաստանել: Չարենցը մի որոշ ժամանակ էր անց կացնում նրա հետ, խնամում և հետո նոր միայն գնում դպրոց: Սա շատ գեղեցիկ և ուսանելի պատմություն է, որը կարող էր կատարվել հիքավի մեծ մարդու հետ:

Կարսի մյուս մասը տարածվում է քաղաքի հարավային հատվածում: Նոր քաղաքը հիմնադրել էին ռուսները: Ժամանակին այստեղ վերաբնակեցվել են մեծ քանակությամբ մոլդկաններ: Ցածրիկ, փայտե կառուցվածքով՝ տիպիկ ռուսական տներից շատերը մինչև օրս էլ կանգուն են: Այստեղ է գտնվում նախկին ռուսական զինվորական թաղամասն ու Ալեքսանդր Նևսկի ուղղափառ եկեղեցին (1885 թ.), որի երկու ծայրերին թուրքերը մինարետներ են կառուցել՝ այն ևս վերածելով մզկիթի: Ժամանակին այստեղ վեր էր խոյանում նաև ռուսների կողմից Կարսի ազատագրմանը նվիրված հուշարձանը, որի բացման պաշտոնական արարողության կադրերը մինչ օրս պահպանվել են Ռուսաստանի կինոֆոտոֆոնո արխիվում: Ցավոք, թուրքական իշխանությունները քաղաքը գրավելուց հետո պայթեցրել էին այդ գեղեցիկ կառույցը:

Ռուսական կայսրության վերջին կայսր Նիկոլայ Բ Ռոմանովը 1914 թվականին այցելել էր Կովկասյան ռազմաճակատ՝ հանգրվանել նաև Կարսում: Նրա գալստյան համար մի գեղեցիկ փայտաշեն կեցավայր էր կառուցվել, որի կիսախարխուլ պատերը մինչ օրս դեռ պահում են քաղաքի երբեմնի ռուսական ոգին¹:

¹ Русский след. Россия-Армения. По результатам научно-туристских экспедиций Российской международной академии туризма и Армянского института туризма: монография / под общ. ред. Е. Н. Трофимова; Российская международная академия туризма, М., 2015, ст. 181-182:

Կարսը ժամանակին մեծ ու շքեղ բնակավայրվայր էր՝ շրջապատված պարիսպներով, արքունական միջնաբերդով և արվարձանով: Հրապարակները կառուցված էին ազատ ոճով: Քաղաքն ուներ նաև իջևանատներ, բաղնիքներ, կամուրջներ և եկեղեցիներ: Իսկ ի՞նչն է այսօր մնացել Կարսում հայկական: Չէ՛ որ գտնվում ես մի քաղաքում, որը դարեր ի վեր եղել էր Հայաստանի բաղկացուցիչ մասը: Մի թե պատմությունն այդքան դաժան է վարվել նրա հետ: Մի թե այստեղ հաստատված օտարականներն ամբողջովին ջնջել են մեր հետքերը: Քոնը, հարազատը գտնելու թափառումներն ակամա բերում են նրա մոտ. Սուրբ վեհություն՝ հրաշագեղ և հզոր: Նրա կողքին ամեն բան անէանում է, թվում է՝ միայն անտարբերությունն է փրկում նրան շրջապատող իրականությունից: Այսպիսին է Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին:

Կարսի ամեն մի նոր կառավարչի համար Ս. Առաքելոց հայ առաքելական եկեղեցին ծառայել էր մեկ որպես մզկիթ, մեկ որպես ուղղափառ եկեղեցի: Այն կառուցվել էր Աբաս Ա Բագրատունու օրոք՝ 10-րդ դարում, երբ մայրաքաղաքը Շիրակավանից տեղափոխվել էր Կարս: Արքայի խորհրդանիշը՝ Բագրատունիների առյուծի պատկերով հնագույն զինանշանը ամփոփված է Ս. Առաքելոցի հարավային ճակատին: Այս հոգևոր կառույցն առաջին անգամ վերածվել էր մզկիթի 1571 թվականին, և հիմա էլ այն գործող մզկիթ է, սակայն եկեղեցու վրա պահպանվել են առաքյալների սրբապատկերներ, տարբեր ոճի զարդաքանդակներ ու խաչեր: Այն հայկական ոգու մարմնացում է, որը զուգահեռաբար ապրում է մահմեդական իրականության մեջ:

Ս. Առաքելոց եկեղեցու մասին ամբողջական պատկերացում կազմելու համար արտաքին տեսքի նկարագրությունը բավարար չէ: Ուղղակի անհրաժեշտ է ներս մտնել հասկանալու համար, թե ինչ է զգում այս եկեղեցին իրեն այդքան օտար աշխարհում: Ներսում գմբեթը պատված է մահմեդական նախշազարդով, իսկ երբեմնի խորանի պատկերակալից քերված են խաչի թևերը:

Այս խորանից վերջին պատարագը մատուցվել էր Խորեն քահանա Ստամբուլյանի կողմից թուրք-հայկական երկրորդ պատերազմի ամենաթեժ օրերին (1920 թվականի հոկտեմբեր): Կարսի երկրորդ առումից հետո այս եկեղեցին ևս վնասվել ու թալանվել էր թուրքերի կողմից:

Երկար ժամանակ եկեղեցին գտնվել էր անմխիթար վիճակում և օգտագործվել որպես պահեստ: Վերջին ժամանակահատվածում միայն տեղական իշխանական մարմինները որոշել էին մաքրել տարածքը և վերածել այն մզկիթի: ՌԻ հարցն այն չէ, որ տեղի բնակիչներին չէր բավարարում հարակից առավել ընդարձակ մզկիթներն, այդ պատճառով է երբեմնի եկեղեցին ծառայում իսլամի հետևորդներին՝ բնավ ոչ. «...տեղի բնակ-

չությունն աղոթատեղիի կարիք չունի, բայց միննույնն է, Ս. Առաքելոցը վերածվել է մզկիթի...»¹:

Սրբավայրի մտոով է հոսում Կարս գետը: Քաղաքում նրա կողերը պատված են մշակված գորշ քարերով: Նրան հարող և հատող անցուղիներն ու փողոցները սալապատված են: Կոյուղու և աղբի փոխադրման ոչ բավարար մակարդակի պատճառով գետը աղտոտված է և պատված զարշահոտությամբ: Գետի վրա առկա են մի քանի կամուրջներ, որոնցից նշանավոր է 13-րդ դարի «Վարդանի կամուրջը»: Ըստ ժողովրդական ավանդազրույցի՝ այս կամրջի տակ չարքեր էին վխտում, ինչն էլ վախեցնում էր մարդկանց: Տեղի քահանան հրաշափառ մի երագ էր տեսել և մարդկանց հորդորել, որ երբ նրանք կանչեն Սուրբ Վարդանին, չարքերն անմիջապես կհեռանան: Այդ օրվանից կամուրջը ստացել էր մեծն զորավարի անունը: Սույն կամուրջն իր բազմադարյա գոյությամբ պարտական է ճարտարապետական այնպիսի մի ուրույն լուծմանը, որի արդյունքում վարարուն գետի հոսքին համարժեք՝ նեղից լայն են կառուցվել կամրջի հիմքի թմբուկները՝ կոտրելով ջրի ուժգնությունն ու ապահովելով նրա կայունությունը:

Կամրջի հարևանությամբ պահպանվում են կլոր տանիքներով հին բաղնիքները: Այստեղից վեր՝ վեհ ժայռի վրա հառնում է հռչկավոր բերդը: Միջնադարյան այս հրաշագեղ կառույցը մեկ անգամը չէ, որ տեղի բնակիչներին փրկել էր օտար նվաճողներից:

Հնում Կարսը մտնում էր Այրարատ նահանգի Վանանդ գավառի մեջ: Առաջին կառավարիչները Վանանդի իշխաններն էին: 928–961 թվականներին Կարսը Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաքն էր, ապա Բագրատունիների կրտսեր ճյուղի՝ Վանանդի թագավորության աթոռանիստը: Գտնվելով միջազգային «Մետաքսի ճանապարհին» Կարսում էապես զարգացած էր արհեստն ու առևտուրը, որն էլ քաղաքին մեծ համբավ ու հարստություն էր պարգևել: Բագրատունիների կառավարման անկումից հետո, Կարսն իր երկրորդ փառքն էր ապրել Զաքարյան իշխանների տիրապետության շրջանում, սակայն վրա հասած նոր աղետն էապես խամրեցրել էր քաղաքի դիմագիծն: Ամրոցը զգալիորեն վնասվել էր մոնղոլ-թաթարների արշավանքների հետևանքով: Օսմանյան և պարսկական զինված ուժերի առճակատման տարիներին կիսավեր ամրոցը զգալիորեն ավերվել էր, սակայն թուրքերը հաշվի առնելով դրա սահմանային ռազմավարական դիրքը, վերակառուցել էին այն և ամրացրել նոր պաշտպանիչ կառույցներով, որի արդյունքում Կարսը 19-րդ դարից ձեռք էր բերել

¹ Մովսիսյան Ա., Արևմտյան Հայաստանի 10 ուխտավայրեր, Ե., 2011, էջ 29:

համաշխարհային համբավ: Հենց այս շրջանից էլ այն ռազմական թատերաբեմ էր դարձել ռուս-թուրքական գորքերի համար:

Ռուսական գորքերը Կարսն առաջին անգամ գրավել էին 1828 թվականին: Անսասան համարվող բերդից բացի, ռուսները տիրացան նաև բազմաթիվ թնդանոթների, գերիների, որոնց մեջ էր նաև Կարսի հրամանատար փաշան: Սակայն եվրոպական պետությունների ճնշման ներքո ստորագրված Ադրիանապոլսի պայմանագրով ռուսներն այն ետ էին վերադարձրել թուրքերին: Նույնը կրկնվել էր նաև երկրորդ գրավման ժամանակ՝ 1855 թվականին: Եվ միայն 1877 թվականին, երրորդ գրավումից հետո, քաղաքն իր շրջակայքով անցել էր Ռուսական կայսրության կազմի մեջ:

Ռուսական տիրապետության տարիներին քաղաքում կար մեկ հունական, երկու ռուս ուղղափառ և մեկ տասնյակից ավելի հայ առաքելական եկեղեցի, ինչպես նաև՝ քառակի անգամ շատ մզկիթ, որոնց մեծ մասն այլևս չէր գործում: Կարսում հիմնվել էին սննդի և թեթև արդյունաբերության մի քանի ձեռնարկություններ: Առկա մոտ 800 մեծ ու փոքր խանութների մեծ մասը պատկանում էր հայերին: Կարսի տնտեսական կյանքում զգալի տեղ էր գրավում նաև գյուղատնտեսությունը՝ դաշտավարության ու անասնապահության ոլորտում:

Մինչ Առաջին աշխարհամարտը քաղաքի բնակչության մեծ մասը՝ մոտ 25 000-ը հայեր էին, կային նաև մեծ քանակությամբ ռուսներ, քրդեր, թուրքեր, եզդիներ և հույներ: Մեծ եղեռնի տարիներին մեծաքանակ գաղթականներ էին ապաստանել Կարսում: Բոլշևիկյան հեղաշրջումից և ռուսական գորքերի անկանոն նահանջից հետո՝ 1918 թվականի ապրիլին նորաստեղծ Անդրկովկասի կառավարության վրաց ղեկավարությունը հաշվի առնելով թուրքական զինուժի սրընթաց առաջխաղացումն ու Բրեստ-Լիտովսկի պայմանագրից բխող կետերը՝ զինվորական կայազորին հրամայել էր պարպել քաղաքն ու անցնել ներկայիս Ախուրյան գետի մյուս ափը: Նահանջող զորքին հետևել էր տեղի հայ բնակչությունը:

Այսպես, անառիկ համարվող բերդը, որում առկա զինամթերքը բավարար էր մի ամբողջ բանակի լիարժեք սպառազինմանը, հանձնվել էր առանց մարտի: Նույն թվականի աշնանն Օսմանյան կայսրությունն ու իր մնացած դաշնակից պետությունները պարտություն էին կրել Առաջին աշխարհամարտում: Մուղրոսի զինադադարի կետերի համաձայն՝ թուրքական զինուժը պարտավորվել էր պարպել զբաղեցրած բոլոր տարածքները և վերադառնալ մինչև 1914 թվականի պետական սահմանները: Ու մինչ թուրքերը Կարսից կհեռանային՝ այդտեղի տեղական մահմեդական կառավարման մարմինների միջոցով ստեղծել էին ինքնահռչակ՝ Հարավ-

արևմտյան Կովկասի Հանրապետությունը (Շուրա)¹: Սակայն շուտով՝ տարածաշրջանում հաստատված բրիտանական զորքերի ակտիվ աջակցությամբ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը չեզոքացրել էին Շուրայի գործունեությունն ու Կարսում հաստատել հայոց իշխանությունը: Դրանից հետո մեծաթիվ հայ գաղթականներ վերադարձել էին Կարս:

Համատարած սովի, հիվանդության, գործազրկության ու անիշխանության պայմաններում, 1920 թվականի մայիսյան (բոլշևիկյան) անհաջող խռովության վերքերը դեռ չթոթափած՝ վրա էր հասել նոր թուրք-հայկական երկրորդ պատերազմը: Ցավալի և անդառնալի քաղաքական, ռազմական, տնտեսական, դիվանագիտական սխալների արդյունքում մեկ ամիս անց՝ 1920 թվականի հոկտեմբերին Մուստաֆա Քեմալին սատարող զինված կազմավորումները Քյազիմ Կարաբեքիրի հրամանատարությամբ, որոնք ի դեպ թվաքանակով ու սպառազինությամբ զիջում էին հայկական զինուժին, պաշարել էին Կարսը: Այդ դեպքերի ականատես Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյանցը գրում էր հետևյալը. «Ազգերի պատմութեան մէջ դժուար է գտնել այնպիսի խայտառակ պարտութիւն, ինչպէս մերն էր այդ օրերին»²: Հայկական բանակի զինվորների մի մասը, որոնք հիմանականում հողագուրկ գյուղացիներ էին, ոգևորված բոլշևիկյան բանվորագյուղացիական կարգախոսներով ու հակապետական քարոզչությամբ՝ ընդհանրապես հրաժարվել էին դիմադրել առաջացող «եղբայր կարմիր թուրքերին»: Եական հակասություններն ավելի էին խորացել նախկին ռուսական կայսերական սպաների և տեղի ֆիդայապետերի միջև: Հիմնական առաջին գունդը ևս մերժել էր կատարել հրամանները, որի պատճառով գնդապետ Մազմանյանն անգամ դիմել էր ինքնասպանության: Եվ ահա, հոկտեմբերի 30-ին քաղաքն, արդեն երկրորդ անգամ առանց դիմադրության, անցել էր թուրքերի հսկողության տակ: Գերի էին ընկել 30-ից ավելի բարձրաստիճան սպաներ, 3 000 զինվորներ, տեղական կառավարման մարմնի մի շարք ներկայացուցիչներ և ազգաբնակչության մեծ մասը³: Երեք օր շարունակ քաղաքը հրի ու սրի էր մատնվել: Բնակչության մի մասը դաժանաբար սպանվել էր, մյուսը՝ զինվորականության հետ քշվել էր կրի խորքերը տաժանակիր աշխատանքի: Ահա այդպես, անփառունակ ավարտ էր ունեցել Կարսի «հայկական շրջանը»:

¹ Կարսի մարզը Հայաստանի առաջին Հանապետության կազմում (ապրիլ 1919թ.- հոկտեմբեր 1920թ.): Նյութեր և փաստաթղթեր, (Մոդուս Վիվենդի կենտրոնի հնավանդ գրքերի և վավերագրերի մատենաշար: Հ. 3), Կազմ.՝ Վ. Հարությունյան, Ե., 2016, էջ 91-92:

² **Տագրճեան Գ.**, Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները, Ե., 2009, էջ 78:

³ **Հարությունյան Վ.**, Մարտական գործողությունները Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ (1920 թ. Հունիս-1920 թ. նոյեմբեր): Հայկական բանակի սպայի հուշերում, Ե., 2019, էջ 84-85:

Այսօր էլ ամրոցը կանգուն է և բաց այցելուների առջև: Բերդի դարպասների հարևանությամբ թյուրքական ցեղի իսլամի հետևորդ ներկայացուցիչներից մեկի գույնզգույն լաթերով պատված դամբարանն է: Կից առկա ցուցանակում էապես խեղաթյուրված է բերդի հիմնադրման և զարգացման պատմությունը. «Կարսի բերդ: Բերդը կառուցվել է 1153 թ. (հիջրի 547) Սալթուկյու սուլթան Մելիք Իզգեդդիինի Սալթուկի նախարար Ֆիրուզ Ակայի կողմից: 1386 թ. (հիջրի 786) բերդն ավերվել է մոնղոլական արշավանքների հետևանքով: 1579 թ. (հիջրի 987) վերստին կառուցվել է Մուրադ Երրորդի հրամանով Սերդար Լալա Մուստաֆա փաշայի կողմից»¹:

Բերդապարիսպի կենտրոնական մասում՝ հին թնդանոթի մոտից, բացվում է քաղաքի համայնապատկերի հիանալի մի տեսարան, որն ավելի մանրամասնորեն կարող ենք ուսումնասիրել տեղադրված հեռադիտակների շնորհիվ: Միջնաբերդի ամենաերևացող հատվածում փակցված է Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի մեծադիր նկարը, որի տակ գրված է. «Vatan sana minnettardır»²: Այն իր տպավորիչ տեսքով ասես հսկում է ողջ քաղաքն: Ընդհանրապես Թուրքիայի բոլոր բնակավայրերում անխտիր այդպիսի հայրենասիրական գրություններով պաստառները տարածված բնույթ են կրում: Առավել երևացող վայրերում կարելի է տեսնել հայրենիքը, պետությունը, պետական դրոշն ու ժամանակակից Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Աթաթյուրքին գովերգող ու հանրահռչակող կոչեր և թևավոր խոսքեր. «Երջանիկ է նա, ով իրեն թուրք է կոչում»³: Կարսի կենտրոնական հրապարակում էլ տեղադրված է հեծյալ Աթաթյուրքի մոնումենտալ արձանը: Որքան էլ մեզ համար Աթաթյուրքի անունը հակակրանք է առաջացնում, այնուամենայնիվ հիշեք, որ տեղացիների համար նա համարվում է հիմնադիր առաջնորդ, ուստի որևէ անհարկի հրապարակավ վիրավորանքը նրա անվան հասցեին կարող է իրավապահ մարմինների հետ լուրջ խնդիրների հանգեցնել:

Ներկայումս Կարսն արագորեն կառուցապատվում է՝ հարավային մասում բազմահարկ շենքերի նոր թաղամաս է հիմնվում: Վերջին տարիներին վերականգնվել ու բիզնես նպատակներով օգտագործվում են հայերի նախկին խանութները, գործատեղերի շենքերը և քարաշեն բնակելի տները, որոնք գողտրիկ գեղեցկությամբ դասավորված են քաղաքի կենտրոնի ուղղաձիգ փողոցների երկու կողմերին: Այստեղ իրար հետևից ձգվում են փոքր խանութներն ու թեյարանները: Կարսում է գտնվում Կովկասի համալսարանը, որի հռչակը դուրս է երկրի սահմաններից:

¹ Վարձք, ՀՃՈՒՀ, № 4, մայիս-հոկտեմբեր, Ե., 2011, էջ 5:

² Հայրենիքը երախտապարտ է քեզ:

³ **Брыер С.**, Турция: путеводитель, пер. с англ. А. Гарькавого, М., 2011, стр. 9.

Իբրև թուրք-ադրբեջանական եղբայրության նշան՝ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկն անվանակոչված է Հեյդար Ալիևի անվամբ: Նման բան կարելի է նկատել նաև Թուրքիայի այլ քաղաքներում: Այստեղ ադրբեջանական խոշոր համայք կա: Տեղի ադրբեջանցիների մի մասը երկրորդ աշխարհամարտի ժամանակ գերի էին հանձնվել գերմանացիներին, իսկ ազատվելուց հետո եկել էին ոչ թե ԽՍՀՄ, այլ Թուրքիա: Մյուսներն էլ «գաղթել էին» ԽՍՀՄ փրկուման և արցախյան պատերազմի տարիներին: Շատ են նաև Նախիջևանի ադրբեջանցիները: Քաղաքում գործում է ադրբեջանական հյուպատոսարան: Գուցե և տեղի ադրբեջանցիների դրոմամբ էր տարիներ առաջ ապամոնտաժվել հայ-թուրքական բարեկամությանը միտված՝ քանդակագործ Մեհմեդ Աքսոյի 30 մետրանոց «Մարդկության հուշարձանը», որը Ռ. Թ. Էրդոդանն անվանել էր «հրեշավոր»:

Քաղաքում զարգացած է նաև զբոսաշրջային ոլորտը: Կարսի նահանգի տեսարժան վայրեր, այդ թվում Անիի ավերակներ, այցելող զբոսաշրջիկներն ու ուխտավորները հիմնականում հանգրվանում են՝ «Grand Ani», «Kale» կամ «Kent Ani» միջին կարգի հյուրանոցներում: Գաստրոտուրիզմի սիրահարների համար նշեմ, որ քաղաքում վերելք է ապրում ռեստորանային բիզնես-մշակույթը՝ հատկապես ավանդական արևելյան խոհանոցի շրջանակներում: Գլխավոր խորտկարանները տեղակայված են քաղաքի կենտրոնական հատվածում: Այցելուները մեծ սիրով համտեսում են տեղի ամենատարածված կերակրատեսակները՝ հալվա, լցոնված խնձոր, ոչխարի քյուֆթա, բոզբաշ, այլուրով ապուր ևն: Առանձնահատուկ են նաև ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների տեսակները, սակայն կապված կրոնական համոզմունքներից՝ որոշակի խմիչքներ այստեղ ուղղակի արգելված է օգտագործելը: Բացի այդ, խորհուրդ է տրվում այս շրջաններում ծորակներից ջուր չխմել, նախընտրելի է գնել այն խանութներից:

Այստեղ ընդհանուր ժամանակային տարածության մեջ զուգահեռաբար գոյություն ունեն ժամանակակից առօրյան և միջնադարյան ոգին: Քաղաքով զբոսնելիս կհասնեք քաղաքապետարանի շենքին: Մի պահ կթվա, թե գտնվում եք Գյումրիում: Այս շենքը Գյումրվա շենքերի տիպիկ օրինակ է: Արտահայտիչ մոնումենտալիզմ՝ ներքին նրբաճաշակ սահմանագծերով և ինչ-որ թեթև մթությանբ: Քաղաքի տեսարժան վայրերից է նաև Կարսի ազգագրության թանգարանը (հասցե՝ Istasyon Mah. Cumhuriyet Cad. No:385), որի ամենահետաքրքիր ցուցանմուշն Առաքելոց վանքի նախկին դուռն է: Թանգարանում հայտնվելուց առաջ դուռը զարդարող երկու փայտե խաչերը հատուկ քերվել են՝ բացառելու համար քրիստոնեական հետքը Կարսի պատմությունից: Այնուամենայնիվ դա չի նվազեցրել այս ստեղծագործության հանճարեղությունը, քանի որ այն փայտի փորագրման գլուխգործոց է: Այս թանգարանում դիտարժան շատ

այլ նմուշներ էլ կան, իսկ ժամանակին նրա պատերից դուրս՝ կից այգում
ևս մեկ կարևոր ցուցանմուշ կար:

Առաջին հայացքից դա մի սովորական ուղևորատար վագոն էր և
միայն ցուցանակից էիր հասկանում թե ինչու է դա թուրքերի համար
սրբորեն պահպանվում և ցուցադրվում: Մայիտակ վագոնի վրա պատկեր-
ված էին թուրքական դրոշի լուսինն ու աստղը և «РСФСР» գրությամբ բոլշ-
ևիկյան խորհրդանիշերն, իսկ վագոնի դիմաց Կարսի պայմանագիրը
թուրքական կողմից ստորագրած Քյազիմ Կարաբեքիր փաշայի կիսանդ-
րին էր: Հենց այս վագոնում, որը եղբայրական թուրքերին էր նվիրել Վ. Լե-
նինը, որոշվել էր Հայաստանի ներկայիս ճակատագիրը: Չարաբաստիկ
պայմանագրին ներկա էին եղել ռուսական բոլշևիկյան պատվիրակույթ-
յան ղեկավար Յակուբ Գոնեցկին, Հայկական ԽՍՀ կողմից Ասքանազ Մ-
ռավյանը, Պողոս Մակինցյանը, ներկայացուցիչներ Վրացական և Ադրբե-
ջանական ԽՍՀ-ներից: 1921 թվականի հոկտեմբերի 13-ին այստեղ ստո-
րագրվելով այդ ամոթալի պայմանագիրն ակնթարթի մեկ արագությամբ
վերագծվել էր մի ամբողջ ազգի ճակատագիրը, որով Քեմալական Թուր-
քիայի լիիրավ իշխանության տնօրինության տակ մնացին ոչ միայն
Արևմտյան Հայաստանի բուն տարածքներն, այլև Կարսի մարզն ու Սուր-
մալուի գավառը: Այդ տխրահռչակ վագոնն այսօր ժամանակավորապես
«մեկնել է» շրջագայության Թուրքիայի եվրոպական հատված:

Կարսում թերևս այսքանն է հայկական, իսկ մնացյալն անձանոթ է,
օտար, և ոչ մի կապ չունի նրա հետ, ինչ փնտրում է քրիստոնյայի հոգին
իր հին հայրենիքում:

Гагик Аветисян, Город Карс по глазам армянского паломника - В
статье описываются достопримечательные места города Карс, их хрис-
тианское прошлое и мусульманское настоящее.

Данная работа составлена на основе заметок, сделанных в ходе
паломничество автора по территории нынешней Турции. Здесь подробно
представлены наиболее известные культурно - исторические образования,
непосредственно связанные с армянами и в целом с армянством. Даны
красочные описания “чудес” Карса: церковь Св. Апостолов - ныне мечеть,
Карсская крепость, мост Вардана, отцовский дом поэта Егише Чаренца и
тд. Представлен и русски след Карса, а также другие подробности,
представляющие интерес для паломников и туристов.

Со знанием дела и по праву очевидца автор комментирует каждый
шаг по маршруту своего паломничество, представляя их материальную и
духовную сферы.

Работа может служить отличным путеводителем для паломников, туристов, путешественников и любителей истории при посещении города Карс.

Gagik Avetisyan, Kars city through the eyes of the Armenian pilgrim - This article presents the author's pilgrimage to Kars, the local Christian past, and the nature of the Muslims.

The once populous city today presents itself as a typical eastern Islamized settlement whose history is distorted substantially by the direct influence of local authorities and Turkish guides. Nevertheless, a number of Armenian historical and cultural monuments continue to act as silent witnesses, summing up the centuries-old traditions of the real owners of the city. One of them is the Church of the Holy Apostles, built during the Bagratunies, which today turned into a mosque, as well as the impregnable fortress Karuts, on the top of the citadel of which the Turkish flag flutters, the Vardan's Stone Bridge and the recently destroyed father's house of Yeghishe Charents.

For the Armenian pilgrims, this city is as native as it is alien and repulsive.